

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՄԻՐԻԱՆՅԱՆ ԳՐԻՇԱ ՄԱՐԿՈՍԻ

ՄԱՐԹԵԹԻՆԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԽԱՂԻՐՆԵՐԸ ՀՀ ԿԱՊԻ ԵՎ ՀԵՌԱՅ ԱՂՈՐԴԱԿՑՈՒ ԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Ը. 00.02 - «Տնտեսություն, նրա ոլորտները և տնտեսագիտությունը և կառավարումը» մասնագիտությունը տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2017

Ատենախոսությունը թյան թեման հաստատվել է Յայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

Գիտական դեկանատ

տնտեսագիտություն թյան դոկտոր,
պրոֆեսոր **Արարատեղիշեի
Չաքարյան**

**Պաշտոնական
ընդդիմախոսներ**

տնտեսագիտություն դոկտոր,
պրոֆեսոր **Միքայել Սերգեյի Մելքոնյան**

տնտեսագիտություն թեկնածու,
դոցենտ
Կառլեն Գագիկի Խաչատրյան

**Առաջատար
կազմակերպություն**

ՀՀ ԳԱԱ Մ.Զոթանյանի անվան
տնտեսագիտություն թյան ինստիտուտ

Ատենախոսությունը պաշտպանությունը կայանալու է 2017 թվականի ապրիլի 27-ին ժամը 14:00-ին Յայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՅ-ի տնտեսագիտություն 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Նալբանդյան 128:

Ատենախոսությունը կարելի է ծանոթանալ Յայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. մարտի 27-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,

տն տես ազի տու թյ ան դո կ տո թ ,
պրո ֆես ո թ

Ս. Ա. Գևորգյ ան

ՍՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Յեռագոտության թեմայի արդիականությունը: Յեռահաղորդակցության ոլորտը հանդիսանում է յուրաքանչյուր երկրի տնտեսության առանցքային ճյուղերից մեկը. այն զգալի նշանակություն ունի երկրների զուգալ մրցունակության բարձրացման առումով, ապահովում է հնարավորինս մեծ ավելացված արժեք, հանդիսանում է դինամիկ զարգացող ոլորտ և ցանկացած երկրի ՏՏ ոլորտի, գիտական մտքի և տեխնոլոգիական զարգացման քաջակային ուղղություններից մեկը: Այն նշանակալի դերակատարում ունի նաև տեղեկատվական հասարակության ու թվային տնտեսության ձևավորման գործում: Սակայն ոլորտի զարգացումը բոլոր երկրներում չէ, որ հաջողվում է, ինչը կապված է մեծածավալ ներդրումների իրականացման անհրաժեշտության, դրանց հետզնումն ապահովող ներուժային շուկաների, ինչպես նաև բնական, տեխնիկական գիտությունների բնագավառում որոշակի ներուժի և գործարարության բարենպաստ միջավայրի առկայության հետ: Բացի այդ, դրանք ոլորտում ներգրավված ընկերությունների տեխնոլոգիական մրցունակության և փորձառության առումով էլ խիստ պահանջներ են սահմանում, քանի որ այս շուկաները՝ ապրանքային կառուցվածքի առումով, հանդիսանում են արագ փոփոխվող, իսկ ճյուղերն աչքի են ընկնում փոփոխությունների առաջադրող գործոնների մեծաթիվությամբ, որոնք հաճախ գտնվում են երկրների ազգային սահմաններից անդին և բացարձակ անվերահսկելի են կապի օպերատորների համար: Յատկանշական է, որ այդ գործոնների ազդեցությամբ հեռահաղորդակցության ոլորտում սպառողական նախասիրությունների և ճյուղի կառուցվածքի հիմնարար կերպափոխումները, լրջագույն խնդիրներ են առաջադրում նաև մարքեթինգային գործընթացի կազմակերպման և կառավարման առումով: Դրանք պահանջում են, որ ընկերությունները անգամ ամենօրյա կտրվածքով ուսումնասիրեն իրենց սպասարկած շուկաները, հետևեն ՏՅՏ ոլորտում ընթացող գործընթացներին՝ պահանջարկի հնարավոր փոփոխությունները կանխատեսելու և դրանց համարժեք արձագանքելու հնարավորություն ունենալու համար, ինչպես նաև ջանքեր ներդնեն նորարարական գործունեության մարքեթինգային ապահովման ուղղությամբ:

Ոլորտի հեռանկարային զարգացման խնդիրը սուր է արտահայտված նաև ՀՀ-ում, որտեղ, չնայած պետության հոգածության և կատարված մեծածավալ ներդրումների հաշվին ապահովված զգալի առաջընթացին, ներկայումս նկատվում են լճացման և անկման միտումներ: Պատճառն այն է, որ չնայած սպառողական պահանջմունքների վերափոխումներին, կապի հիմնական օպերատորները կարծես «կառչել» են իրենց սպասարկած շուկայական հատվածներից և իրենց ողջ նորարարական պոտենցիալը՝ ոլորտի զարգացման և դրանում նոր հատվածների ձևավորման փոխարեն, ուղղում են դեպի իրենց հատվածներում առկա առաջարկի բազմազանեցումը: Սակայն ընկերությունների մագմավարական

վերակողմնորոշումը պահանջում է իրականացնել ՏՀՏ գլոբալ շուկայում ընթացող գործընթացների համակողմանի վերլուծության, ոլորտի զարգացման խոչընդոտների բացահայտում, ինչպես նաև գլոբալ ճյուղի կանխատեսվող փոփոխության ունենալի՝ ՀՀ հեռահաղորդակցության ոլորտի վերափոխումների վրա ազդեցության գնահատում: Նշված խնդիրների լուծման գիտակնորեն հիմնավորված մոտեցումների մշակման անհրաժեշտությամբ էլ պայմանավորված է հետազոտության թեմայի հրատարակությունը: Հատկանշական է, որ ոլորտի զարգացման հիմնախնդիրներին տարբեր տեսանկյուններով ու խորությամբ անդրադարձել են բազմաթիվ հայրենական հետազոտող տնտեսագետներ, սակայն նրանց հետազոտությունները համալիր կերպով չեն լուսաբանում հեռահաղորդակցության ոլորտը, չեն պարզաբանում ՏՀՏ այլ ճյուղերի հետ դրա փոխառնչությունները, այլ կետորոնանում են ոլորտի առանձին հատվածների խնդիրների լուսաբանման վրա: Բացի այդ, դրանք հիմնականում առնչվում են ոլորտի ընկերությունների մարքեթինգային գործընթացի մարտավարական խնդիրների լուծմանը՝ չկենտրոնանալով ոլորտի հեռանկարային զարգացման բնագավառում մարքեթինգի խնդիրների վրա: Ատենախոսության մեջ համալիր կերպով հետազոտված է հեռահաղորդակցության ոլորտը, ներկայացված են ՏՀՏ ճյուղի այլ ոլորտների հետ դրա կապերն ու փոխազդեցությունները, ՏՀՏ ճյուղում ընթացող զարգացումների ազդեցությամբ սպառողական պահանջմունքների փոփոխության առաջադրած խնդիրները և ոլորտի հեռանկարային զարգացման հնարավոր ուղղությունները, ինչով էլ պայմանավորված է հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Իբրև հետազոտության նպատակ է սահմանվել ՀՀ հեռահաղորդակցության ոլորտի համալիր մարքեթինգային հետազոտության իրականացումը, դրա հետագա կերպափոխումների կանխատեսումը, ոլորտի հեռանկարային զարգացման հնարավորությունների և խոչընդոտների վերհանումը, ինչպես նաև ոլորտի ընկերությունների բիզնեսի աճի հեռանկարային ուղղությունների սահմանում: Նշված նպատակներով ատենախոսությունում սահմանվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել մարքեթինգային գործընթացի կազմակերպման և մարքեթինգային հետազոտությունների իրականացման առանձնահատկություններն ու խնդիրները հեռահաղորդակցության ոլորտի ընկերություններում,
- ուսումնասիրել հեռահաղորդակցության ոլորտի կազմը, կառուցվածքը, ՏՀՏ այլ ճյուղերի հետ փոխառնչությունները, գլոբալ ճյուղի զարգացման արդի միտումները, գնահատել դրանց հնարավոր ազդեցությունը ՀՀ հեռահաղորդակցության ոլորտի վրա,

- ուսուցման ախտի ուղորտի առաջատար ընկերությունները կիրառած մարքեթինգային ռազմավարությունը ունենալու և գնահատել ՅՅ-ում մղրանց ներդրման ու կիրառման հնարավորությունը,
- իրականացնել ՅՅ հեռահաղորդակցության ուղորտի համալիր մարքեթինգային հետազոտություն, հստակեցնել ուղորտի կազմը, ապրանքային և ֆիրմային կառուցվածքը, գնահատել դրա առանձին հատվածների հեռանկարային զարգացման ներուժը,
- վերլուծել ուղորտի ընկերությունների մարքեթինգային գործունեության բնորոշ գծերը, գնահատել մարքեթինգային ռազմավարությունների արդյունավետությունը, ինչպես նաև կապի օպերատորների մասնագիտական հարցումների իրականացմամբ գնահատել ընկերությունների ռազմավարական զարգացման կողմնորոշումները և արդի իրողություններին հետդրանց համապատասխանությունն աստիճանը,
- իրականացնել ՅՅ հեռահաղորդակցության ուղորտի սպառողների վարքագծի համալիր հետազոտություն, բացահայտել կապի օպերատորների և ծառայությունների ընտրությունն հիմնական գործունեությունը, կանխատեսել հաղորդակցման ձևերին տրվող սպառողական նախաառավությունների փոփոխություններին հնարավոր ուղղությունները,

Հետազոտության օբյեկտ և առարկան: Հետազոտության օբյեկտ են հանդիսանում ՅՅ հեռահաղորդակցության ուղորտը և դրա զարգացման վրա ազդող գործոնների համախումբը: Հետազոտության առանձին օբյեկտներ են հանդիսանում նաև ՅՅ հեռահաղորդակցության ուղորտի սպառողների վարքագիծը և առաջատար ընկերությունների մարքեթինգի կազմակերպման փորձը: Հետազոտության առարկան ՅՅ հեռահաղորդակցության ուղորտի ընկերությունների կորպորատիվ, գործարար և գործառնական ռազմավարությունների մարքեթինգային ռազմավարությունների ինտեգրման հիմնախնդիրներն են ու դրանց լավարկման հիմնական ուղիները:

Հետազոտության տեսակն, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության համար տեսամեթոդական հիմք են հանդիսացել ռազմավարական մարքեթինգին, մարքեթինգային հետազոտություններին, ռազմավարական կառավարման առնչվող հարցերնական և արտասահմանյան հեղինակների աշխատությունները, հեռահաղորդակցության ուղորտի հետազոտություններում մասնագիտացված հարցերնական և միջազգային կազմակերպությունների հրապարակումները, ինչպես նաև կապի ծառայությունների և կապի երեք հիմնական օպերատորների մենեջերների շրջանում հեղինակի կողմից իրականացված սոցիոլոգիական և մասնագիտական հարցումների արդյունքները: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՅՅ Ազգային վիճակագրական ծառայության, ՅՅ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, ՅՅ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի, Համալիր հային տնտեսական համաժողովի հրապարակումները,

հաշվետվությունները, զեկուլյցները, ինչպես նաև ոլորտի հետազոտության բնագավառում մասնագիտացված կազմակերպությունների վիճակագրական հրատարակումները: Ատենախոսությունում կիրառվել են համակարգային և իրավիճակային հետազոտություններ, նկարագրական և որոնողական հետազոտությունների մեթոդներ, վիճակագրական, գործոնային, համեմատական, ադյունակային և գրաֆիկական վերլուծության մեթոդներ:

Հետազոտության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը: Ատենախոսությունը պարունակում է մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթ են հանդիսանում հետևյալները.

- հեռահաղորդակցության ոլորտի ընկերությունների 2011-2015թթ. տեխնիկատնտեսական ցուցանիշների փոփոխությունների և սպառողների կողմից կապի օպերատորի ու հաղորդակցության միջոցի ընտրության վրա ազդող գործոնների կորելացիոն վերլուծության և համարման արդյունքներով հիմնավորվել է ոլորտի բջջային կապի և ինտերնետ ընկերության ծառայությունների շուկաներում ընկերության ոլորտների իրականացված մարքեթինգային ծախսերից՝ գովազդին և վաճառքների խթանմանը նպաստակառդղվող ծախսերի անարդյունավետությունը, քանի որ դրանց փոփոխությունը որևէ կերպ չի ազդում բաժանորդների ներգրավման, ներհոսքի և արտահոսքի վրա. բաժանորդների ներգրավումն առավել ասես պայմանավորված է առաջարկվող սակագնային փաթեթների արտոնյալ պայմանների և տեխնոլոգիական գործոնների ազդեցությամբ:

- հեռահաղորդակցության ոլորտի համալիր հետազոտության մեջ հիմնավորվել է, որ համացանցում հայ օգտատերերի սոցիալականացման արդյունքում տեղի է ունենում սպառողական պահանջմունքների ֆորմացիոն նոր փոփոխություն, ինչը դրսևորվում է սպառողական նախապատվություններին՝ կապի միջոցից դեպի հաղորդակցման միջոց «միգրացիոն վ», որին արդյունավետ հարմարվելու նպատակով մշակվել է շուկայի վերափոխման պայմաններում ոլորտի ընկերությունների բիզնես-մոդելի փոփոխության մոտեցումներ, սահմանվել են հեռանկարային զարգացման նոր ուղղություններ և մշակվել են դրանցում բիզնեսի ծավալման մեթոդական երաշխավորություններ:

- հեռահաղորդակցության ոլորտի ընկերությունների համար մշակվել է մարքեթինգային հետազոտության գործիքների արդյունավետ ինտեգրման նոր մոտեցում, որի էությունը կայանում է կապի օպերատորների տեղեկատվության համակարգում որոնողական, նկարագրական ու պատճառային հետազոտությունների իրականացման ավտոմատացված գործիքների, սպառողներին առնչվող տեղեկատվական հոսքերի մեքենայացման համակարգերի և մեծ տվյալների համակարգերի ինտեգրման մեջ: Վերոնշյալի առնչությամբ սահմանվել են տեղեկատվության հավաքման, մշակման և վերլուծության անհրաժեշտ գործիքները, և տրվել են տեղեկատվական ենթահամակարգերի փոխկապակցման ու հետազոտության

հետազոտության փորձարկումը, հրապարակումները և հետազոտության կառուցվածքը:

«Մարքեթինգի դերը հեռահաղորդակցության ոլորտի ընկերությունների ռազմավարական կառավարման համակարգում» վերնագրով առաջին գլխում


հստակեցվել են ընկերության կորպորատիվ, գործարար և գործառնական ռազմավարությունների մշակման և կիրառման գործընթացում մարտավարական և ռազմավարական մարքեթինգի խնդիրները, ուսումնասիրվել են հեռահաղորդակցության ոլորտի կազմը, կառուցվածքը, ներկայացվել են 2005-2015թթ. դրանում տեղի ունեցած վերափոխումները, հստակեցվել են ՏՅՏ ճյուղի այլ ոլորտների հետ վերջինի փոխառնչությունները և տեսակարար կշիռը ՏՅՏ հասույթում: Բացի այդ, հստակեցվել են ոլորտի ամանձնահատկություններիով պայմանավորված մարքեթինգային գործընթացի կազմակերպման խնդիրներն ու լավարկման հնարավորությունները:

Մարքեթինգի և ռազմավարական մարքեթինգի խնդիրներով զբաղվող առաջատար հետազոտողների աշխատությանը ունեցող ուսումնասիրումը ցույց է տվել, որ մարտավարական մարքեթինգի խնդիրների վրա կենտրոնացած ընկերություններում, թեև շարունակվում է արժևորվել մարքեթինգի կիրառման անհրաժեշտությունը, սակայն կառավարչական որոշումների ընդունման բնագավառում տեղի է ունենում մարքեթինգի ստորաբաժանման դերակատարման ընդգծված նվազում: Սահիմնականում մեկնաբանվում է նոր տնտեսության ազդեցությանը, ինչի արդյունքում նախկինում կենսունակ ռազմավարությունները, թվային տնտեսության պայմաններում դադարում են մրցունակ լինել: Խնդրի լուծման միակ ուղին շուկայի առաջատարի, հավակնորդի և որմնախորշեր սպասարկողների համար ադապտացված պարզունակ 4-P ռազմավարությունների մշակումից մարքեթինգի` դեպի ընկերության աճի և զարգացման ռազմավարությունների սպասարկումը կենտրոնացումն է: Նշվածով էլ պայմանավորվել է ռազմավարական մարքեթինգի ուղղության ձևավորումը, որի հայեցակարգային մոտեցումներից ամենատարածվածները հանդիսանում են շուկայական կողմնորոշման ռազմավարությունները և նորարարական գործունեության մարքեթինգային ապահովումը: Սակայն շուկայական կողմնորոշումը հեռահաղորդակցության ոլորտի ընկերությունների համար չի կարող արդյունավետ լինել, քանի որ ՏՅՏ ոլորտում ապրանքների և ծառայությունների կարճ կենսապարբերաբանի և ոլորտի անընդհատական վերափոխումների հետևանքով հնարավոր է ապրանքի բացառիկության վրա հիմնված ռազմավարությունների մշակմամբ երկարաժամկետ մրցակցային առավելություններ ձեռք բերել:

Հեռահաղորդակցության ոլորտը ՏՅՏ ճյուղի 6 ամանձին հատվածներից մեկն է: Այն հանդիսանում է համաշխարհային տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկը, ինչն առավել ապես դրսևորվում է ոչ թե ճյուղի տպավորիչ աճից ու ցանկությունների, այլ ճյուղում ընթացող դինամիկ փոփոխությունների:

յ ու ն ն եր ո վ , հ ա մ ե մ ա տ ա բ ա ր կ ար ճ ժ ա մ ա ն ա կ ա հ ա տ վ ա ճ ու մ տ ա ս ն յ ա կ ն ո ր գ ո ր ծ ու ն ե ու թ յ ա ն ձ ե եր ի առ ա չ ա գ մ ա մ բ , ճ յ ու ղ ի տ ար բ եր հ ա տ վ ա ճ ն եր ի փ ո խ ա դ ար ձ կ յ ա ն ու մ ն եր ո վ կ ամ փ ո խ ա եր տ ա ճ մ ա ն դ ր ս ու ո ր ու մ ն եր ո վ (գ ծ . 1): Տ Ր Տ ճ յ ու ղ ը տ ն տ ե ս ա կ ա ն գ ո ր ծ ու ն ե ու թ յ ա ն ե գ ա կ ի ո լ ո ր տ ն եր ի ց Է , ո Ր ի կ առ ու ց վ ա ճ ք ը ը ն դ ամ ե ն ը 5 տ ար ի ն եր ի ը ն թ ա ց ք ու մ Մ Ա Կ -ի տ ն տ ե ս ա կ ա ն գ ո ր ծ ու ն ե ու թ յ ա ն տ ե ս ա կ ն եր ի ս տ ա ն դ ար տ դ աս ա կ ար գ չ ու մ մ ե ծ ա ճ ա վ ա կ վ եր ա ն ա յ ու մ ն եր ի Է ե ն -թ ար կ վ ել :

Ը ն դ ի ա ն ր ա պ ե ս ո լ ո ր տ ի գ ո ր ծ ու ն ե ու թ յ ա ն ձ ե եր ի բ ա գ մ ա գ ա ն ե ց ու մ ը և ա յ լ ո լ ո ր տ ն եր ի գ ո ր ծ ու ն ե ու թ յ ա ն ձ ե եր ի հ ե տ փ ո խ ա եր տ ա ճ ու մ ը հ ա ն գ ե ց ր ե լ ե ն ն ր ա ն , ո ր ա յ ն ս կ ս ե լ Է դ ի տ ար կ վ ե լ ի բ ր և առ ա ն ձ ի ն ճ յ ու ղ ` ի ր մ ե ջ կ յ ա ն ե լ ո վ ն ա ն տ ն տ ե ս ու թ յ ա ն ա յ լ ճ յ ու ղ եր ի գ ո ր ծ ու ն ե ու թ յ ա ն ձ ե եր (օ Ր ի ն ա կ կ ա պ ը ` տ ր ա ն ս ա ր տ ի ճ յ ու ղ ի ց , հ ր ա տ ար ա կ չ ա կ ա ն գ ո ր ծ ը և ա յ լ ն): Ս ա հ ա ն գ ե ց ր ե լ Է ն ա ն ո լ ո ր տ ի վ ի ճ ա կ ա գ ր ու թ յ ա ն վ ար մ ա ն վ եր ա ն ա յ ու մ ն եր ի , ի ն չ ի հ ե տ ն ա ն ք ո վ Է ա պ ե ս բ ար դ ա ն ու մ Է հ ա տ կ ա պ ե ս հ ե մ ա հ ա դ ո ր դ ա կ ց ու թ յ ա ն ո լ ո ր տ ի հ ա ու յ թ ի ց ու ց ա ն ի շ ն եր ի վ եր լ ու ծ ու թ յ ու ն ը , ք ա ն ի ո ր դ ր ա ն ք NACE 1 և NACE 2 դ աս ա կ ար գ մ ա մ բ ն եր ա մ վ ա ճ ե ն տ ն տ ե ս ու թ յ ա ն ա յ լ ճ յ ու ղ եր ու մ և մ ի ա վ ո ր վ ա ճ ե ն գ ո ր ծ ու ն ե ու թ յ ա ն ա յ լ ձ ե եր ի հ ե տ :



Ն եր կ ա յ ու մ ս հ ե մ ա հ ա դ ո ր դ ա կ ց ու թ յ ա ն ո լ ո ր տ ը ն եր առ ու մ Է լ ար ա յ ի ն , ա ն լ ար , ար բ ա ն յ ա կ ա յ ի ն կ ա պ ի ծ առ ա յ ու թ յ ու ն ն եր ը և հ ե մ ա հ ա դ ո ր դ ա կ ց ա կ ա ն կ ա պ ի ա յ լ ծ առ ա յ ու թ յ ու ն ն եր ը (տ ի ե գ եր ա կ ա ն , ա վ ի ա -ն ա վ ի գ ա ց ի ո ն ծ առ ա յ ու թ յ ու ն ն եր), ո Ր ո ն ց ու մ ն եր ա մ վ ա ճ ե ն տ ա ս ն յ ա կ գ ո ր ծ ու ն ե ու թ յ ա ն ձ ե եր , ո Ր ո ն ց փ ո խ ա եր տ ա ճ մ ա ն գ ո ր ծ ը ն թ ա ց ն եր ը դ ե մ և ս չ ե ն դ ա դ ար ե լ : Ո լ ո ր տ ի դ ի ն ա մ ի կ փ ո Ւ Ւ խ ու թ յ ու ն ն եր ի պ ա մ ա ն ն եր ու մ առ ա վ ե լ կ ե ն ս ու ն ա կ ե ն ն ո ր շ ու կ ա ն եր ձ և ա վ ո ր ե լ ու և ս պ ա ս ար կ ե լ ու ռ ա գ մ ա վ ար ու թ յ ու ն ն եր ը , ո Ր ո ն ք ս ա կ ա յ ն կ ար ի ք ու ն ե ն լ ր ա ց ու ց ի չ օ ժ ա ն դ ա կ ու թ յ ա ն ` ը ն կ եր ու թ յ ա ն դ ր ա կ ա ն ի մ ի ջ ի ձ և ա վ ո ր մ ա ն և հ աճ ա խ ո ր դ ն եր ի հ ա վ ա տ ար մ ու թ յ ա ն բ ար ձ ր ա ց մ ա ն օ ա բ եր ա տ ի վ -տ ա կ տ ի կ ա կ ա ն ռ ա գ մ ա վ ա -ր ու թ յ ու ն ն եր ո վ , մ ա ն ա վ ո ր ա պ ե ս , օ ա բ եր ա տ ո ր -հ աճ ա խ ո ր հ ար ա բ եր ու -



թյուրևերում ընտանիքի գաղափարի ներդրմամբ ու ակտիվ ԿՄՊ միջոցառումների առաջ մղմամբ:

Ոլորտի դինամիկ զարգացումները և ՏՐՏ այլ հատվածների հետ փոխերեսման մը էապես բարդացնում են մրցակցային միջավայրի և շուկայական վերլուծության հարցերը, ինչը կապված է շուկայի սահմանների նույնականացման բարդության հետ և սպառողների պահանջմունքների անընդհատական «միգրացիայի» հետևանքով ճյուղային մրցակիցների նույնականացման անհնարինություն հետ: Մյուս կողմից, կապի օպերատորների կողմից հաճախորդների սպասարկման նպատակով մեծ տվյալների բազաների պարտադիր օգտագործումը, սեփական IP տարանցման կապուղիների առկայությունը և բիզնես գործընթացների ավտոմատացումը հնարավորություն են ընձեռնում էականորեն դյուրինացնել և արագացնել սպառողներին և դրանց վարքագծին առնչվող տեղեկատվության հավաքման, սպառողական հարցումների և մեդիադիտարկումների իրականացման գործընթացները: Դրան հնարավոր է հասնել տվյալների հավաքման, մշակման և վերլուծության աշխատանքներում ռոբոտացված տեխնոլոգիաներով հարցազրուցավարների, տեքստային իդենտիֆիկատորների, կայքերի այցելությունների հաշվարկման պիքսելների, վիճակագրական հաշվիչների, ինչպես նաև հարցումների իրականացման CAPI և CATI տեխնոլոգիաների և մեծ տվյալների մշակման ծրագրային ապահովման միջոցների ներդրման ճանապարհով: Ընդ որում մատնանշված գործիքները չպետք է կիրառվեն ինքնավարության սկզբունքով, այլ ինտեգրվեն մեկ միասնական տեղեկատվական համակարգում, ինչը ենթադրում է, որ դրանց համար պետք է մշակվեն մուտքային ու ելքային տվյալների ստացման և փոխանցման չափորոշիչներ, ժամանակահատվածներ, համակցման ֆորմուլաներ: Ուշագրավ է, որ նշված հետազոտական գործիքների ինտեգրման արդյունքում հեռահաղորդակցության ոլորտի ընկերությունները կարող են վերածվել սպառողների վերաբերյալ ընդհանրացված տվյալների վաճառողների և զգալի տեղ գրադեցնել մարքեթինգային հետազոտության ներքին շուկայում: Այսինքն սեփական տեղեկատվական կարիքների լուծումը հնարավորություն կընձեռնի հասնել նաև գործարար պորտֆելի բազմազանացման՝ միանգամայն այլ շուկաներ մուտք գործելու ճանապարհով:

«Հեռահաղորդակցության ոլորտի բնորոշ գծերը և զարգացման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետության նույն վերնազրով երկրորդ գլխում հստակեցվել են հեռահաղորդակցության ոլորտի պետական կարգավորման սկզբունքները, կարգավորիչ մարմնի՝ կապի օպերատորների գործունեության վրա ազդեցության մեխանիզմները, ուսումնասիրվել է ոլորտի տեխնոլոգիական հագեցվածության շարժընթացը, կատարվել են գլոբալ ճյուղի տեխնոլոգիական հագեցվածության հետ համադրումներ, վերլուծվել են ոլորտի կազմը, կառուցվածքը, առանձին հատվածների շարժընթացները, զար-

գացման ներուժը, գնահատվել է ոլորտի հասունացում դրանցից յուրաքանչյուրի նշանակալիությունը: Ուսումնասիրվել է նաև ոլորտի առանձին հատվածների ֆիրմային կառուցվածքը, օպերատորների սակագնային քաղաքականությունը, առաջարկած ծառայությունների կազմը, կառուցվածքը, կիրառած մարքեթինգային ռազմավարությունները: Գնահատվել են կապի օպերատորների մարքեթինգային գործունեության արդյունավետությունը, ուսումնասիրվել են կապի ծառայությունների և կապի օպերատորների ընտրությունը վրա ազդող հիմնական գործոնները, մասնաշվեռն են օպերատորների կողմից բաժանորդների բազայի ձևավորման, պահպանման և բաժանորդների հոսունության հիմնական պատճառները:

ՀՀ-ում հանրային էլեկտրոնային հաղորդակցությունների ծառայությունները հանդիսանում են կարգավորվող գործունեության ձևեր և ենթակա են պարտադիր լիցենզավորման: Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում ընկերությունների գործունեությունը վերահսկվում է Հանրային ծառայությունների կարգավորող հանձնաժողովը (հետայսու՝ ՀԾԿՀ): Հատկանշական է, որ ոչ միայն ոլորտի ազատականացումը և մրցակցության ստրուկտուրայի և դրա տեխնոլոգիական հագեցումը, առաջարկվող ծառայությունների բազմազանացումը և ոլորտի զարգացումն ընդհանրապես, մեծապես պայմանավորվել են ՀԾԿՀ գործունեամտությամբ:



Գծ 2. ՀՀ «Տեղեկատվության և կապի» ճյուղի և ՀՆԱ հավելածի տեմպերը 2003-2015թթ., և հեռահաղորդակցության ոլորտի տեսակարար կշիռը տնտեսության նուսումնագրաված ներդրումներում և ուղղակի ներդրումներում 2007-2014թթ.¹

Հայաստանը ներկայումս ոլորտում ամկա մրցակցության տեսանկյունից համարվում է աշխարհի ամալել ազատական և սուր մրցակցություն ունեցող երկրներից մեկը, որն առաջատար դիքեր ունի նաև ինտերնետի թողունակության, կապի ցանցի ծածկույթի սփուման, ինչպես նաև հեռահաղորդակցական ծառայությունների մատչելիության և ինտերնետի ներթափանցման ամումով:

¹ Աղբյուրը ՀՀ ԱԿԾ 2016, 2010, 2006թթ., Վիճակագրական տարեգրքեր, Հայաստանի հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2008-2014թթ. հունվար-դեկտեմբերին հրապարակումներ:


Հեռահաղորդակցության ոլորտի աճի, տնտեսության թողարկման ծավալներում դրա բաժնեմասի, տնտեսությունում ներգրավված ներդրումների շարժընթացների վերլուծության ամբարձանագրվել է, որ թեև վերջինս այնքան մեծ մասնակցություն չունի տնտեսության թողարկման ծավալներում, սակայն նկատելի մասնակցություն ունի ՀՀ տնտեսական ակտիվության ամպահովման և տնտեսությունում ներդրումների ներգրավման գործում (գծ. 2):

Ոլորտի հասուն շարժընթացի դիտարկման արդյունքում, աճի բնորոշման տեսանկյունից, այն պայմանականորեն բաժանվել է երկու փուլերի. 2003-2009թթ., որը բնորոշվել է իբրև ոլորտի դինամիկ աճի փուլ (տարեկան միջինում 22.0%) և 2010թ. մինչ ներկա ժամանակահատվածը, որը բնորոշվել է իբրև ոլորտի կայունացման (հասունության փուլին անցման) ու լճացման նախնական դրսևորումների ի հայտ գալու փուլ (տարեկան աճը՝ միջինում 6.0%): Տեղեկատվության և կապի ճյուղի 2003-2015թթ հասուն լինելու և դրա առանձին հատվածների հասուն լինելու ցուցանիշների վերլուծության ամբարձանագրվել է, որ այն հիմնականում պայմանավորվել է հեռահաղորդակցության ոլորտի փոփոխություններով ($R^2=0,9542$), որը հանդիսացել է նաև ՏՀՏ ճյուղի ամենաառանցքային հատվածը, ինչպես դրանում ունեցած տեսակարար կշռի (համախառն հասուն լինելու՝ 97-99%-ը), այնպես էլ ներգրավված ներդրումների տեսանկյունից: Իր հերթին հեռահաղորդակցության ոլորտի աճը պայմանավորված է եղել բացառապես բջջային կապի ծառայությունների հատվածի աճով ($R^2=0,98$), թեև դիտարկված ժամանակահատվածում զգալի աճել է նաև ինտերնետ հասանելիության ծառայությունների հասուն լինելը²: Սա հանգեցրել է ոլորտի հասուն լինելու ամբարձանագրված հեռախոսակապի հասուն լինելու կազմվել է ոլորտի հասուն լինելու 53,3%-ը, բջջային կապինը 36,9%-ը և ինտերնետ հասանելիության ծառայություններինը 4,4%-ը, ապա 2015թ.-ին ամբարձանագրված հեռախոսակապի մասնաբաժինը ոլորտի համախառն հասուն լինելու կազմվել է 12,2%, իսկ բջջային կապինն ու ինտերնետ հասանելիության ծառայություններինը համապատասխանաբար՝ 61,3% և 19,7%:

Ոլորտի առանձին հատվածների իրացման ցուցանիշների վերլուծության ամբարձանագրվել է նաև կապի ծառայություններին տրվող նախապատվությունների փոփոխությունների տեսանկյունից ոլորտի կառուցվածքային հատվածների կենսապարբերաբանը բաժանվել է 2 փուլերի՝ բջջային կապի դինամիկ աճի ֆոնին ամբարձանագրված կապի լճացման ու անկման (2005-2008) և ինտերնետ հասանելիության դինամիկ աճի ֆոնին բջջային կապի


² Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից Ms Excel փաթեթի կիրառմամբ: Հեռահաղորդակցության ոլորտի հասուն լինելու փոփոխության և ֆիքսված հեռախոսակապի հասուն լինելու փոփոխության կապվածության ցուցանիշը՝ $R^2=0.2706$, իսկ ոլորտի հասուն լինելու փոփոխության և կապվածության ոլորտը ինտերնետ հասանելիության ծառայությունների հասուն լինելու փոփոխության հետ՝ $R^2=0.3712$:

ծառայությունների լճացման ու անկման (սկսած 2013թ.-ից): Վերոնշյալի սահմանման համար հիմք են հանդիսացել ինչպես ոլորտի կառուցվածքային հատվածների իրացման ցուցանիշների շարժընթացները, այնպես էլ բաժանորդների սպասած տրաֆիկների ծավալների փոփոխությունները (գծ. 3):



Գծ. 3
Չեռահաղորդակցում ոլորտի 3 առաջատար օպերատորների ծառայությունների վճարների մեկ ակտիվ բաժանորդին բաժին ընկնող միջին ամսական հառույթի (ARPU) և միջին ամսական տրաֆիկի (MOAU) փոփոխությունները


Բջջային կապի ծառայությունների շուկայում ընկերությունների դիրքերի ուսումնասիրմամբ պարզվել է, որ «ՂՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ-ն հանդիսանում է ձայնային, տեսաձայնային, տեքստային տվյալների փոխանցման և շարժական բջջային կապով ինտերնետ հասանելիության ծառայությունների շուկաների բացարձակ առաջատարը 61-68%-ի միջակայքում ունեցած բաժնեմասով, որը 1.7-2.3 անգամ գերազանցում է իր բաժնեմասով երկրորդը:



Գծ. 4 Բջջային կապի օպերատորների բաժնեմասերը բջջային կապի ծառայությունների և դրա առանձին տեսակների շուկաներում 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Ընկերությունների շուկայական դիրքերի մեկնաբանման նպատակով դրանց գովազդային ծախսերի, սակագնային քաղաքականության, սակագնային փաթեթների և ընկերությունների ու դրանց առաջարկած ծառայությունների ընտրության առումով սպառողների վրա ազդող գործոնների վերլուծությամբ պարզվել է, որ բջջային կապի ծառայությունների շուկայում դիրքի ապահովումը և պահպանումը պայմանավորված են բացառապես գնային

գործոններով և որևէ կապ չունեն ընկերությունների մեդիաակտիվություն հետ: Այսպես, 2008-2015թթ ընթացքում կապի օպերատորների կատարված մարքեթինգային ծախսերի, դիլերային միջնորդավճարների և սակագների փոփոխությունների նկատմամբ պահանջարկի առաձգականության վերլուծությունը փաստում է, որ «Ղ Տելեկոմ» և «Արմենտել» ՓԲԸ հասույթը, ինչպես նաև բաժանորդների ներհոսքն ու արտահոսքը կապ չունեն մարքեթինգային ծախսերի և դիլերային միջնորդավճարների փոփոխությունների հետ³: «\$SU Արմենիա» (2015-ից՝ «Յուբոմ») ընկերության պարագայում բաժանորդների ներհոսքը, արտահոսքը և հասույթի փոփոխությունները կապ ունեցել են կատարված մարքեթինգային ծախսերի հետ, սակայն ընկերությունը դիտարկվող ժամանակահատվածում նոր է մուտք գործել շուկա և դժվար է գնահատել դրա բաժանորդների բազայի ավելացումը իսկապես գովազդային մեծ ծախսերի^o, թե^o վերջինիս մուտքի հետևանքով շուկայի ծավալների աճի արդյունք են հանդիսանում, հատկապես, որ նույն ժամանակահատվածում «Արմենտել» ՓԲԸ-ն կրկնակի պակաս ծախսերով ևս կարողացել է շուրջ երկու անգամ ավելացնել իր բաժանորդների թիվը: Ընկերությունների սակագնային փաթեթների և սակագնային պլանների վերլուծությունը ցույց է տվել, որ «Ղ Տելեկոմ»-ը շուկայում կիրառում է ամենացածր սակագները և մեկ բաժանորդի հաշվով մրցակիցների համեմատ ունի ամենացածր հասույթի ցուցանիշը (ARPU), մինևույն ժամանակ ունենալով տրաֆիկի ամենամեծ սպառումը (MOaU): Արդյունքում կատարվել է եզրահանգում, որ «Ղ Տելեկոմ» ՓԲԸ պարագայում բաժանորդների հավատարմությունը պայմանավորված է բացառապես նրա վարած գնային քաղաքականությամբ: Պնդումը հիմնավորվել է նաև բջջային կապի ծախսությունների սպառողների շրջանում հեղինակի կողմից իրականացված հարցման արդյունքներով, ըստ որոնց՝ կապի օպերատորների բրենդը և գովազդները որևէ ազդեցություն չունեն նրանց կամ նրանց առաջարկած ծախսությունների ընտրության վրա: Օպերատորների ընտրության և փոփոխության վրա առավել մեծ ազդեցություն ունեցող գործոններն են ծախսությունների գինը և կապի վրա կատարվող ծախսերի մեծությունը: «Ղ Տելեկոմ» ՓԲԸ պարագայում որոշիչ գործոն է նաև բաժանորդի շփման շրջանակի՝ այդ օպերատորի բաժանորդ լինելու հանգամանքը (անվճար շփման հնարավորությունը):



³ «Ղ Տելեկոմ»

Գծանկար 5. 2015 թ. ԳՀ Լայնաչափի ինտերնետ ծառայությունների և միջազգային IP տրանսպորտի և մանրածախ փոխանցման շուկայի ընկերությունների և ներքին ձևավորած մասնաբաժինները՝ ըստ ինտերնետ հասանելիության տեխնոլոգիայի⁴




Լայնաչափի ինտերնետ ծառայությունների շուկայում գործում են 89 ընկերություն, սակայն առավել խոշոր մասնաբաժիններ ունեն «Արմենտել» (ապրանքանիշը՝ Beeline), «Զի Էն Սի-Ալ ֆա» (ապրանքանիշը՝ Rostelecom), «Ղ-Տելեկոմ» (ապրանքանիշը՝ VivaCell-MTS), ՓԲԸ-ները և «Յուբոմ» (ապրանքանիշը՝ Ucom) ՍՊԸ-ն (գծ. 5):

Ընկերությունների ձևավորած շուկայական բաժնեմասերի մեկնաբանման նպատակով վերջինների գովազդային ծախսերի, սակագնային փաթեթների և ընկերությունների ընտրության առումով սպառողների վրա ազդող գործոնների վերլուծությամբ պարզվել է, որ ինտերնետ հասանելիության ծառայությունների շուկայում նույնպես ընկերությունների կատարած մարքեթինգային ծախսերը և բաժանորդների թվի փոփոխությունները փոխկապված չեն: Լայնաչափի ինտերնետ հասանելիության օպերատորի ընտրության առումով առավել կարևոր գործոններ են հանդիսանում ինտերնետի թողունակությունը, տրամադրվող ինտերնետի ծավալները, կապի ծածկույթի հասանելիությունը և որակը, ինչպես նաև ծառայությունը մատուցող օպերատորի սպասարկման որակը: Տվյալ դեպքում հեղինակի կողմից իբրև որոշիչ են համարվել ամրակցված կապի ծածկույթը և ինտերնետ պրովայդերների սակագնային քաղաքականությունը, ինչը փաստարկված է նրանով, որ շուկայում ամենամեծ մասնաբաժին ունեցող երկու ընկերությունները մատակարարվող ինտերնետի միևնույն ծավալի համար առաջարկում են ամենացածր գները և ունեն օպտիկա-մանրաթելային կամ թվայնացված հանրային ամրակցված կապի ամենամեծ ցանցը:

Ամրակցված հեռախոսակապի ծառայությունների շուկայում գործում են 4 ընկերություններ, որոնցից «Արմենտել» ՓԲԸ-ին բաժին է ընկնում շուկայի 95%-ը, «Յուբոմ» ՍՊԸ-ին՝ 3%-ը: Ամրակցված հեռախոսակապի ծառայությունը հանդիսանում է աստիճանաբար շուկայից դուրս մղվող կապի տեսակ: Այս շուկայում օպերատորի ընտրության հիմնական գործոններն են բնակավայրում օպերատորի առկայությունը և ծառայության գինը:

Մալուխային հեռուստատեսության ծառայությունների մատուցումը հանդիսանում է հեռախոսորդակցության ոլորտի համեմատաբար նոր և արագ աճող ենթահատվածներից:

⁴ Ըստ ընկերությունների կազմերում հրապարակված տեխնիկական տեսակետի ցուցանիշներում մատնանշված բաժանորդական բազայի մեծությունների:



Գծանկար 6. Մալ ու խայ ին հեռուստատեսության բաժանորդները և շահույթի աճը 2010-2015թթ-ն օպերատորների բաժնեմասերը 2015թ դրությամբ

